ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ 50-ԱՄՅԱԿԻՆ

Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության հիմնադրման 50-ամյակին էր նվիրված ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը տեղի ունեցավ 1970 թ. նոյեմբերի 12—13-ը:

Ժողովում, որի նախագահությունում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Հ. Մուրադյանը և կուսակցական ու պետական այլ ղեկավար աշխատողներ, ներածական խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Այնուհետև, ողջույնի խոսքով հանդես գալով, ընկ. Ա. Ե. Քոչինյանը բարձր գնահատեց սովետահայ գիտնականների դերը Հայաստանի սոցիալիստական վերածնության, նրա ծաղկման ու բարգավաճման գործում:

Ընկ. Ա. Ե. Քոչինյանը ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և ՀՍՍՀ Մինիստրների սովետի անունից ջերմորեն ողջունեց ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին և ի դեմս նրանց՝ հանրապետության բոլոր գիտաշխատողներին, նրանց ցանկացավ նորանոր հաջողություններ հանուն հայրենի գիտության հետագա վերելքի:

Իր ելույթում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մ. Դ. Միլիոնշչիկովը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության, պրեզիդենտ Մ. Վ. Կիլդիշի, սովետական բոլոր գիտնականների անունից Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակի սութիվ ջերմ ու սրտագին շնորհավորանքներ ուղղեց հանրապետության գիտնականներին և բոլոր աշխատավորներին: Նա մասնավորապես ընդգծեց սովետահայ մշակույթի, հանրապետության ժողտնտեսության և գիտության բարձր հաջողությունները: — Հայաստանը, —ասաց նա, —որտեղ մինչև հեղափոխությունը ոչ մի գիտական և բարձրագույն ուսումնական հաստատություն չկար, ներկայումս ունի գիտությունների ակադեմիա՝ մոտ հինգ հազար գիտաշխատողով: Նրանցից 695-ը գիտությունների թեկնածուներ են, 136-ը՝ դոկտորներ: Իսկ ընդհանուր առմամբ՝ հանրապետությունում աշխատում են ավելի քան 11 հազար գիտաշխատողներ, որոնցից ավելի քան երեք հազարը գիտությունների թեկնածուներ են և 420-ը դոկտորներ:

Հանրապետության գիտական աշխատողներին, այնուհետև ջերմորեն ողջունեցին Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ռ. Ռ. Դվալին, Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Ա. Սմիռնովը, Կիրգիզական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ Կ. Ռ. Ռիսկուլովան, Էստոնական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գլխավոր գիտական քարտուղար Վ. Ա. Մաուսմյագին, Մոլդովական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության գիտական քարտուղար Գ. Վ. Զալինը, ակադեմիկոս Ա. Ա. Ադխամովը (Տաջիկստան), Թուրքմենական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Օ. Ն. Մամեդնիյազովը:

Այնուհետև ընդհանուր ժողովում զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը՝ «Գիտության զարգացումը Սովետական Հայաստանում», ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Գ. Ա. Դալոյանը՝ «Կոմունիստական կուսակցության կազմավորումը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», ՀՍՍՀ ԳԱ վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանը «Հայաստանի հանքա-հումքային ռեսուրսները և դրանց հետագա ընդլայնման ուղիները», մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու Ֆ. Մ. Մարգսյանը՝ «Հայաստանի էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի ստեղծման աշխատանքների մասին» թեմաներով:

Ընդհանուր ժողովի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին զեկուցումները, որոնցում ընդհանրացված էին սովետահայ գիտության նվաճումները:

* * *

1970 թ. նոյեմբերի 17—20-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովը, նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակին: Ժողովում արտացոլվեցին սովետական իշխանության տարիներին հանրապետությունում մեծ զարգացում ապրած հասարակական գիտությունների՝ պատմագիտության, հնագիտության ու ազգագրության, լեզվաբանության, գրականագիտության, արվեստաբանության և մյուս բնագավառների նվաճումները:

Ժողովն սկսվեց նոյեմբերի 17-ի պլենար նիստով, որը բացեց ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ծ. Պ. Աղայանը: Պլենար նիստում լսվեցին պատմական գիտությունների դոկտորներ Ա. Մ. Հակոբյանի «Սովետական Հայաստանը 50 տարում» և Խ. Հ. Բարսեղյանի «Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորումը» զեկուցումները:

Բաժանմունքի ժողովի մասնակիցներն այնուհետև երեք սեկցիաներում լսեցին 20-ից ավելի զեկուցումներ:

Պատմական գիտությունների սեկցիայում բանրագումարի բերվեց հայ ժողովրդի դարավոր պատմության ու մշակույթի ուսումնասիրման ընթացքը: «Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների առաջացման հարցի շուրջը» զեկուցման մեջ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը կանգ առավ II և III դդ. Հայաստանի սոցիալ-տնտեսական ու հողային հարաբերությունների, Արևելքի երկրների հետ նրա ունեցած առևտրական լայն կապերի հարցի վրա: Պատմական գիտությունների դոկտոր Գ. Խ. Սարգսյանը իր զեկուցման մեջ հանգամանորեն նշեց սովետահայ մարքսիստական պատմագրության այն ակնառու նվաճումները, որ ձեռք են բերվել հին Հայաստանի պատմության մի շարք կարևոր հարցերին նոր ու ճշգրիտ մեկնաբանություններ տալու գործում: ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը նշեց, որ Սովետական Հայաստանի հնագետների ջանքերով վերջին հիսուն տարում «խոսել են» հայ ժողովրդի պատմության, նյութական մշակույթի հազարամյա բազմաթիվ լուռ վկաներ, ճշտվել է քաղաքամայր Երևանի տարիքը: Հայաստանի արևելագետների ու ազգագրագետների կատարած աշխատանքների ամփոփմանն էին նվիրված պատմական գիտությունների թեկնածուներ Հ. Գ. Ինճիկյանի և Դ. Ս. Վլսրդումյանի զեկուցումները: Սեկցիայում զեկուցումներով հանդես եկան նաև ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Բ. Պետրոսյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Մ. Ա. Բաբլոյանը և Վ. Կ. Ոսկանյանը:

Բանասիրական գիտությունների և արվեստագիտության սեկցիայում ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. Ղանալանյանը իր զեկուցման մեջ ուրվագծեց սովետահայ բանագիտության անցած արգասավոր ուղին և արժեքավորեց հայ բանագետների ստեղծած մնայուն գործերը: Հայոց լեզվի բարբառների դասակարգման նոր եղանակների մշակման հարցին էր նվիրված ԳԱ թղթակից-անդամ Գ. Բ. Ջահուկյանի հետաքրքիր զեկուցումը: Սովետահայ լեզվաբանության հիսնամյա նվաճումներն իր զեկուցման մեջ ամփոփեց ԳԱ թղթակից-անդամ Է. Բ. Աղայանը: Սովետահայ արվեստաբանության զարգացման և նրա առջև կանգնած նոր խնդիրներին էր նվիրված արվեստաբանության դոկտոր Ռ. Վ. Զարյանի զեկուցումը: Սեկցիայում հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան նաև բանասիրական գիտությունների դոկտորներ Ս. Գ. Աբրահամյանը, Ս. Բ. Աղաբաբյանը, Ս. Ն. Սարինյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Ը. Մարգարյանը:

Մյուս՝ տնտեսագիտության, փիլիսոփայության և իրավաբանության սեկցիայում տնտեսական գիտությունների դոկտոր Ն. Ռ. Թովմասյանը ուրվագծեց տնտեսագիտական մտքի անցած ուղին Սովետական Հայաստանում և նշեց այն խնդիրները, որոնց լուծմանն են նվիրվել հանրապետության տնտեսագետները: Իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Զ. Բեգիյանի զեկուցումը նվիրված էր Սովետական Հայաստանի պետականության զարգացմանը՝ 50 տարում: Սեկցիայում զեկուցումներով հանդես եկան նաև գիտությունների թեկնածուներ Մ. Խ. Քոթանյանը, Ա. Մ. Եկմալյանը, Ա. Մ. Թևոսյանը:

* * *

Հոկտեմբերի 27-ին Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի և մանկավարժական ինստիտուտի հայ ժողովրդի պատմության ամբիոնի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ՀԿԿ կազմավորման 50-ամյակին:

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Մ. Տ. Քոչարյանը:

Կոմունիստական կուսակցության կազմավորման և Հայաստանում սովետական իշխանության հաստատման հարցերի մասին զեկուցեց պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Գալոյանը: Նա մասնավորապես անդրադարձավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման դերին ու նշանակությանը: «Սովետահայ պատմագրությունը 50 տարում» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ծ. Ռ. Հարությունյանը: Զեկուցողը ցույց տվեց, որ սովետական պատմագրության հետ համընթաց քայլելով, սովետահայ պատմագրությունը անցել է զարգացման երեք գլխավոր էտապներ, որոնք հիմնականում համապատասխանում են մեր հասարակության զարգացման պատմության գլխավոր էտապներին: Պատմական գիտությունների թեկնածու Վ. Կ. Ոսկանյանը խոսեց հայ գաղթօջախների և սփյուռքահայության պատմության հետ կապված հարցերի մասին: Հայկական մանկավարժական ինստիտուտի ավագ դասախոս Մ. Ս. Հովսեփյանի զեկուցումը նվիրված էր 50 տարիների ընթացքում Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումներին:

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը Սովետական Հայաստանի 50-ամյակին նվիրված գիտական նստաշրջաններ անցկացրեց նաև Մասիսում, Լենինականում և ֆիզիկայի ինստիտուտում:

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ